ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

2016
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ԴԱՎԹԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ





Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Դավթաշեն վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

2016 թվականն Էլ մոտեցավ ավարտին: Մեր վարչական շրջանի աշխատակազմն այս տարի նույնպես արեց առավելագույնը՝ իր առջև դրված խնդիրները լուծելու, Դավթաշենը ավանդաբար մայրաքաղաքի լավագույն վարչական շրջաններից մեկը լինելու պատիվը պահպանելու և այն Է՛լ ավելի բարեկարգ ու հարմարավետ թաղամաս դարձնելու ուղղությամբ: Եվ դա արվեց ձեզանից յուրաքանչյուրի անմիջական մասնակցությամբ նաև: Այս փոքրիկ ձեռնարկում ներկայացված են մեր ձեռքբերումները, կատարած աշխատանքն ու 2016 թվականի ընթացքում իրականացված ծրագրերը: Համոզված եղեք, որ մեր աշխատակազմը գալիք տարի նույնպես անելու է ամեն ինչ՝ արվածը պահպանելու և առկա դրական փոփոխությունների ոգուն համապատասխան առաջընթաց ապահովելու համար: Վստահ եմ, որ ձեր անմիջական մասնակցությամբ և աջակցությամբ մենք միասին ավելի կշենացնենք մեր սիրելի Դավթաշենը:

Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար՝
Ռուսլան Բաղդասարյան

2016թ. Դավթաշեն վարչական շրջանում իրականացվել են ընթացիկ վերանորոգման, փողոցների, մայթերի և բակերի ասֆալտապատման, սալիկապատման, թեքահարթակների կառուցման և լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ:



Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասից դեպի 2-րդ թաղամաս տանող ճանապարհի ընդլայնում և բարեկարգում

- եզրաքարերի տեղադրում՝ **289.5 գծմ**
- բետոնե արգելապատնեշ՝ **64 գծմ**
- ասֆալտապատում՝ **3704 մ²**
- կանաչ տարածքի ստեղծում՝ **180 մ²**





Փողոցների, մայթերի, բակերի ասֆալտապատում

- բակային տարածքներ՝ **15 049 մ²**
- ճանապարհների ասֆալտապատում՝ **15 686 մ²**













Մայթերի, պուրակների սալիկապատում

- Սալիկապատվել է 384 մ² ընդհանուր մակերեսով տարածք:
- Սալիկապատումն իրականացվել է վարչական շրջանի **4** բարեկարգված բակերում:

Նորոգվել է 2 828.6 գծմ եզրաքար

- Բարեկարգված 4 բակերում՝ **2 295.6 գծմ**
- Աղաբաբյան փողոցում և Փիրումյաններ փողոցում՝ **180 գծմ**
- Տ.Պետրոսյան փողոցի վերջնամասում՝ **353.5 գծմ** եզրաքար և **64 գծմ** բետոնե արգելապատնեշ

Վարչական շրջանում ևս **18** հասցե ապահովվել է **1 225 մ** երկարությամբ լուսավորության ցանցով:

Ոռոգման նոր ցանցի անցկացում 701 գծմ
- Բակային տարածքներում՝ **651 գծմ,**
- Տ. Պետրոսյան փողոցի վերջնամասում՝ **50 գծմ:**










Նոր կանաչ տարածքի ստեղծում
Կանաչ տարածքը կազմում է 23 հա
Կանաչ տարածքների մակերեսն ավելացել է 4 230 մ²-ով
- Բակային տարածքներում՝ **3 750 մ²,**
- Տ. Պետրոսյան փողոցում՝ **180 մ²,**
- Փիրումյաններ և Ա. Միկոյան փողոցների խաչմերուկում՝ **300 մ²:**


Ծաղկային մակերեսը կազմել է 1 800 մ²
Տնկվել է.
- **58868** ծաղկասածիլ,
- կակաչի **30000** սոխուկ:




Գարնանային և աշնանային ծառատունկին տնկվել է.
- **1 680** ծառ, **270** թուփ և **500** վարդի թուփ,
- իրականացվել է **530** ծառերի սանիտարական էտ:







Շքամուտքերի վերանորոգում


- Վերանորոգվել է **38** մուտք՝ բոլոր հարկաբաժիններով:





Տանիքների վերանորոգում

- 55 հասցեում վերանորոգվել և 6 շենքում հիմնանորոգվել է **10 898 մ²** ընդհանուր մակերեսով հարթ տանիք:
- Համատիրությունների հետ համատեղ իրականացվել է **5 000 մ²** հարթ տանիքի վերանորոգում:


Համագործակցություն համատիրությունների հետ

- Վերելակների պահեստամասերի տրամադրում և փոխարինում՝ **283** վերելակ,
- կոյուղագծերի վերանորոգում՝ **340 գծմ,**
- ջրագծերի վերանորոգում՝ **112 գծմ,**
- անձրևատարների վերանորոգում՝ **1 070 գծմ,**
- շքամուտքերի և նկուղների դռների տեղադրում՝ **19 հատ:**







Բարեկարգվել և շահագործման է հանձնվել 4 բակային տարածք

1-ին թաղամաս 9, 10, 10ա, 4, 5, 6, 7, 8 շենքերի բակ

- **12 900 մ²** ընդհանուր մակերեսով,
- իրականացվել է կանաչապատում **960 մ²**:

2-րդ թաղամաս 27, 28 շենքերի բակ

- **4700 մ²** ընդհանուր մակերեսով,
- իրականացվել է կանաչապատում՝ **1 320 մ²**:










2-րդ թաղամաս 21, 22, 23, 24 շենքերի բակ

- **5 200 մ²** ընդհանուր մակերեսով,
- իրականացվել է կանաչապատում՝ **370 մ²**:

4-րդ թաղամաս 25/1, 30, 31

- **4 500 մ²** ընդհանուր մակերեսով,
- իրականացվել է կանաչապատում՝ **1 100 մ²**:














Բակային տարածքներում տեղադրվել են

- **8** զրուցարան,
- **50** նստարան,
- **59** մետաղական աղբաման,
- **20** պլաստմասե աղբաման:




Խաղահրապարակների ստեղծում
Ստեղծվել է 4 խաղահրապարակ
Տեղադրվել են

- մանկական **5** խաղ,
- **35** մարզագույք:




Մինի ֆուտբոլի դաշտի տեղադրում

- 4-րդ թաղամաս 38, 39, 41, 42, 43, 44 շենքերի բակում տեղադրվել է **1** ֆուտբոլի դաշտ,
- վերանորոգվել է **2** խաղադաշտ:

Կենտրոնական այգու բարեկարգման աշխատանքների շրջանակում կառուցվել է հանրային զուգարան









Իրականացվել է բակային նկարազարդում՝ 770 մ²

Կոյուղատար համակարգի վերանորոգում

- Դավթաշեն 1-ին թաղամաս 19, 20, 21, 22, 23 շենքերի և 15 շենքի կոյուղագծի հիմնանորոգում և նոր դիտահորերի կառուցում










Արտաքին լուսավորության ցանցի անցկացում

- բակային **3** տարածք ապահովվել է արտաքին լուսավորության համակարգով,
- արտաքին լուսավորության նոր ցանց է անցկացվել Աղաբաբյան փողոցից դեպի գերեզմանատուն տանող ճանապարհահատվածում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Թեքահարթակների կառուցում

բազմաբնակարան շենքերի աստիճանավանդակներին կից և շենքերին հարակից տարածքներում կառուցվել է **18** թեքահարթակ:





Այցելություն զորամասեր

Կազմակերպվել է ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ շրջաններում ծառայող **46** ժամկետային զինծառայողի **54** ծնողի այցելությունը զորամասեր:






Մեր հոգածության կարիքն ունեցող մարդկանց կողքին

Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ

Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Դիակոնիա» ԲՀԿ-ի, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի, «Լույսի աստղ» ՀԿ-ի, ԱՀԲՀԿ-ի, Դավթաշեն Սրբոց Նահատակաց եկեղեցու, «Միայնակ տարեցների սպասարկում» ՀԿ-ի, «Հայաստանի խուլ-համրերի» միության, «Գլոբալ-Կրեդիտ» ՓԲԸ-ի, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Վուդլենդ Հիլզ քաղաքի «Departament of social services community care licensing California» գրասենյակի, ինչպես նաև անհատ բարերարների ու բարեգործների հետ:







- **2** անօթևան ապահովվել է ժամանակավոր կացարանով,
- **57** շահառու օգտվել է բարեգործական ճաշարանից:

Տրամադրվել են

- դրամական օգնություն՝ **334** ընտանիք,
- նյութական օգնություն՝ **399** ընտանիք,
- պարենային օգնություն՝ **1165** ընտանիք,
- վառելափայտի տրամադրում՝ **39** ընտանիք,
- սգո արարողությունների համար համապատասխան աջակցություն՝ **27** ընտանիք,
- պետպատվերի շրջանակում ուղեգրեր՝ **34** ընտանիք,
- ամանորյա սննդի փաթեթների տրամադրում՝ **1400** ընտանիք:






Աջակցության ծրագրեր են իրականացվել

- վարչական շրջանում բնակվող սիրիահայ 23 ընտանիքի համար,
- Արցախյան հերոսամարտում զոհվածների, քառօրյա պատերազմի մասնակիցների, անապահով ազատամարտիկների, 1-ին և 2-րդ կարգի զինհաշմանդամների, զոհված զինծառայողների 278 ընտանիքների համար,
- միայնակ, անժառանգ, անկողնային տարեցների համար՝ ապահովելով տնային խնամք:
- Ստեփանակերտի և Մարտակերտի հետ համագործակցության շրջանակում Դավթաշեն վարչական շրջանի կողմից իրականացվել են սոցիալական ծրագրեր:








Կազմակերպվել է

- 100 երեխայի հանգիստը «Հաստիկ» ճամբարում,
- հիպոթերապիա, պարային թերապիա և հատուկ լող՝ հաշմանդամ երեխաների համար,
- Գիտելիքի օրվա կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների 100 երեխայի տրամադրվել է պայուսակ և գրենական պիտույքներ:

«Երևան՝ արևի քաղաք» սոցիալական ծրագրի շրջանակում 213 ընտանիքի տրամադրվել է կենցաղային տեխնիկա:









ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ





Նախադպրոցական հաստատությունների վերանորոգում, հիմնանորոգում

- Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ռազմական համագործակցության գրասենյակի և Երևանի քաղաքապետարանի համագործակցության շրջանակում հիմնանորոգվել է « Երևանի հ. 59 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 5 խմբասենյակ,

- կատարվել են պատուհանների փոխարինման աշխատանքներ հ. 60 մանկապարտեզում,
- հիմնովին վերանորոգել են հհ. 58, 59, 60 և 61 մանկապարտեզների մեծ խոհանոցները, պահեստները, նախամուտքերը, անձնակազմի համար նախատեսված հանդերձարաններն ու սանհանգույցները,
- իրականացվել են հ.62 մանկապարտեզի տանիքի վերանորոգման աշխատանքներ,
- մանկապարտեզներին տրամադրվել են մանկական բակային խաղեր:





Դավթաշեն վարչական շրջանի, Հանրային լրագրության ակումբի և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան համագործակցության շրջանակում Ա. Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոցի բակում կառուցվել է նոր խաղահրապարակ:





Նախադպրոցական հաստատությունների համար գույքի ձեռքբերում

- Մանկապարտեզները համալրվել են նոր գույքով և խոհանոցային տեխնիկայով:

Դավթաշեն վարչական շրջանի 5 մանկապարտեզ անվճար հիմունքներով հաճախում է 1575 երեխա:





Միջոցառումների կազմակերպում

- Կրթօջախներում նշվել է ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձը, անցկացվել են տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ և բաց դասեր:




ԼՂՀ շրջանների հետ համագործակցության ծրագրի շրջանակում, որպես կրթական ու մշակութային բաղադրիչ, աջակցություն է ցուցաբերվել Մարտակերտ և Ստեփանակերտ քաղաքներին:

- Մանկապարտեզների ավարտական խմբերի սաներին տրամադրվել են դպրոցական պայուսակներ՝ գրենական պիտույքներով (**511 հատ**):
- Ամանորյա միջոցառումների շրջանակներում մանկապարտեզների սաներին տրվել են ամանորյա փաթեթներ (**1 500 հատ**):





Ավ. Տերտերյանի անվան արվեստի դպրոցը համալրվել է նոր երաժշտական գործիքներով: Ավ. Տերտերյանի անվան արվեստի դպրոց հաճախում է 982 երեխա:








«Դավթաշենի հ.40 գրադարան» ՀՈԱԿ-ը 2016թ. համալրվել է նոր գրականությամբ:
Հ. 40 գրադարանի ընթերցողների թիվը **1581** է:

Մշակութային միջոցառումների կազմակերպում

- կազմակերպվել են տոն և հիշատակի օրերին նվիրված մշակութային միջոցառումներ,
- «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության շրջանակում Դավթաշեն վարչական շրջանը հյուրընկալել է Իտալիայի Կարրարա քաղաքի պատվիրակությանը,
- ՀՀ մարզերի և ԼՂՀ շրջանների միջև իրականացվել են համագործակցային ծրագրեր մշակութային և կրթական ոլորտներում,
- Մեծ եղեռնի 101-ամյա տարելիցին նվիրված բոլոր կրթական և մշակութային կառույցներում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ,
- «Երևանյան ամառ - 2016» միջոցառումների ծրագիրը կրել է շարունակական բնույթ:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

Հիմնանորոգվել է «Հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը

- Մարզադպրոց հաճախում է **425** սան,
- Դավթաշենի շախմատի դպրոց հաճախող սաների թիվը **250** է,
- Դավթաշենի բռնցքամարտի դպրոց հաճախող պատանիների թիվը **40** է:











Մարզական միջոցառումների կազմակերպում Անցկացվել են.

- ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված մարզական խաղեր,
- ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղեր,
- ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը,
- «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» բակային փառատոնը,
- Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմամարզական խաղեր:

Կազմակերպվել են.

- ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Սամվել Գևորգյանի 66-ամյակին նվիրված հուշամրցաշար շախմատ մարզաձևից,
- Ս. Գևորգյանին նվիրված բռնքամարտի պատանիների առաջնություն հուշամրցաշար,
- մարզահամերգային տոնահանդես՝ մանկապարտեզների սաների մասնակցությամբ,
- նարդու, շախմատի և շաշկու առաջնություններ:






Երևանի Դավթաշեն վարչական շրջանի և Ֆրանսիայի Անտոնի քաղաքի միջև համագործակցության շրջանակում հոկտեմբերի 21-25-ը Երևան է այցելել Անտոնիի ֆրանս-հայկական միության նախագահ Վիսսամ Նեմեի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության անդամ, բարձրակարգ խոհարար Ժան Իվ Կողվեզը Երևանի N1 արհեստագործական պետական ուսումնարանում անցկացրել է «Ֆրանսիական խոհանոցի գաղտնիքները» թեմայով վարպետության դաս՝ 20 սաների համար:








Դավթաշեն վարչական շրջանի «Արմեններ» պարային համույթի 28 սան օգոստոսի 31-ից սեպտեմբերի 21-ը մասնակցել է «Արտեկ» միջազգային մանկական կենտրոնում կազմակերպված միջազգային մրցույթ - փառատոնին:












Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ վարչական շրջանի կողմից տրամադրվել է բազմաբնույթ աջակցություն: Վարչական շրջանի ղեկավար Ռուսլան Բաղդասարյանը աշխատակիցների հետ միասին այցելել է ԼՂՀ:

ԵԿՄ Դավթաշեն ՏԿ-ի 115 անդամ հերթափոխով մեկնել է Մարտունու շրջանի դիրքեր, իսկ նրանց ընտանիքներին պարբերաբար տրամադրվել է ֆինանսական, պարենային աջակցություն: Այդ ընթացքում կատարվել է 4 այցելություն և տրամադրվել ֆինանսական օգնություն, պարենային աջակցություն՝ 15,5 տոննա պարունակությամբ, նյութատեխնիկական աջակցություն:




Հունիսի 1-ին ԼՂՀ-ից եռօրյա այցով Դավթաշեն են ժամանել 30 երեխաներ, մասնակցել էքսկուրսիաների ու տարբեր հետաքրքիր ծրագրերի:












Երևան - ՀՀ մարզեր համագործակցության շրջանակում Դավթաշեն վարչական շրջանի և Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:



2016

ԴԱՎԹԱՇԵՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝

+(374 11) 518-288

davtashen@yerevan.am



www.yerevan.am